

Արձանագրություն N9

Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

08.05.2015թ. նիստի

Օրակարգ

1. Բակալավրիատի ավարտական կուրսերի ուսանողների արտադրական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
2. 2014-2015 ուս. տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվությունները /Ե. Երզնկյան, Մ. Ապրեսյան/:
3. Հեռակա ուսուցման 2015-2016 ուս. տարվա ուսումնական պլանի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 26-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնների վարիչները նշեցին, որ պրակտիկայի արդյունքները հիմնականում դրական են, դպրոցական պրակտիկաներն անցել են առավել արդյունավետ, բայց որոշ հաստատություններում ուսանողները առանձնապես շատ օգուտ չեն ստացել, ուստի հաջորդ տարվա համար կարելի է վերանայել ուսանողներին այդ հաստատություններ ուղարկելու հարցը:

Որոշեցին՝ Պրակտիկայի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ՝ Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Ե. Երզնկյանը իր հաշվետվության մեջ նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ հաջող ձևով ընթանում է Էդյուստֆտ համակարգչային ծրագրով դասընթացը, որին հետևում է մոնիթորինգը դասախոսի և ուսանողի կատարած աշխատանքների վերաբերյալ, ընթանում են մշտական դասալսումներ, ստուգվում աշխատանքային պլանները, գիտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքները դրական են, մասնակցել են Սլովակիայի, Գերմանիայի, Ռուսաստանի միջազգային գիտական կոնֆերանսներին, գործում է տեսական-գիտական սեմինարը, որակավորման դասընթացների անհրաժեշտ կրեդիտները հավաքվել են, լավ են ընթանում նաև հրատարակչական աշխատանքները, տեղի են ունեցել բազմաթիվ մասնագիտական հանդիպումներ, ֆիլմերի ցուցադրումներ: Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանը տեղեկացրեց, որ այս ժամանակահատվածում հարթ ձևով ընթանում են ամբիոնի հիմնական աշխատանքները, իրականացվում Թոեֆլ և Այթեֆ միջազգային թեստավորման քննությունները, իրավաբանների համար նախատեսված նոր թեստավորման ծրագիր է սկսվելու իրականացվել, նախատեսվում է համագործակցություն Աելթս միջազգային թեստավորման քննությունների շրջանակներում բրիտանական խորհրդի հետ, հրատարակվել են շատ կարևոր դասագրքեր և բառարաններ, անգլիական բանասիրության ամբիոնի հետ իրականացվում է թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվետու ժամանակահատվածում Անգլերենի թիվ 1 և 2 ամբիոնների կատարված աշխատանքները գնահատել լավ:

3. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի ղեկան և գիտտիրոհի նախագահ Ս. Աբրահամյանը ներկայացրեց հեռակա ուսուցման 2015-2016 ուս. տարվա ուսումնական պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեց հեռակա ուսուցման 2015-2016 ուս. տարվա ուսումնական պլանը:

4. ԸՆԹԱՅԻՎ ՀԱՐՑԵՐ

Որոշոցին՝

- Հաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Նազենի Հովակիմյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., դոց. Ա. Ջիվանյանին:
- Հաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Հասմիկ Ղաջոյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ., դոց. Ա. Կնյազյանին:
- Միջնորդել և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին Անգլիական բանասիրության ամբիոնի դոց., բ.գ.թ. Գայանե Մուրադյանին տալ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարման իրավունք՝ Ժ.02.07 Գերմանական լեզուներ մասնագիտությամբ:
- Միջնորդել և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին Անգլիական բանասիրության ամբիոնի դոց., բ.գ.թ. Արմինե Մաթևոսյանին տալ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարման իրավունք՝ Ժ.02.07 Գերմանական լեզուներ մասնագիտությամբ:
- Միջնորդել և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին Անգլիական բանասիրության ամբիոնի դոց., բ.գ.թ. Աննա Կնյազյանին տալ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարման իրավունք՝ Ժ.02.07 Գերմանական լեզուներ մասնագիտությամբ:
- Երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Նաիրա Մկրյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:
- Տպագրության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դասախոսներ Լ.Կարապետյանի, Ն.Մարտիրոսյանի, Ս.Խանդանյանի և Գ.Հարությունյանի դասագիրքը:
- Տպագրության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դասախոսներ Կ. Քոչունցի և Հ. Մկրտչյանի ուսումնական ձեռնարկը:

Գիտտիրոհի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտտիրոհի քարտուղար՝

Գ. Մուրադյան

8 մայիսի 2015 թ.